# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ոստիկանության կարիքների համար << ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ/2017/ԳԳ/85 >> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.11.2017թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին. հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետի տեղակալ, ինքը և սպառազինության ապահովման բաժնի պետ,ոստիկանության գնդապետ Ա.Գասպարյան, անդամներ՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գույքի ապահովման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Խ. Հարությունյան, ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ս. Սեդրակյան, ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Մ.Հայրապետյան, ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության իրավախորհրդատու Գ. Մարտիրոսյան, քարտուղար՝ ՀՀ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ.Հովակիմյան:

ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված <<ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ/2017/ԳԳ/85>> ծածկագրով ընթացակարգի մասնակից <<Սեմանգ>> ՍՊԸ-ի հայտը հայտերի բացման փուլում մերժվել էր՝ հայտի ապահովման (zip) ֆայլի անընթեռնելի լինելու պատճառով: Արձանագրության և կնքելու մասին հայտարարության հրապարակումից հետո <<Սեմանգ>> ՍՊԸ-ն տեղեկացրեց, որ (zip) ֆայլի անընթեռնելի լինելը համակարգչային տեխնիկական խնդիր է: Հրավիրված մասնագետի օգնությամբ ծրագրի թարմացումից հետո հայտի ապահովումը հնարավոր է բացել, և վերջինս համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը որոշեց կրկին գնահատել հայտերը, ինչի արդյունքում 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասերով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում <<Սեմանգ>> ՍՊԸ-ն: Հանձնաժողովը որոշեց ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ծանուցել մասնակցին, որպեսզի ներկայացնի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը:

ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ ՊԵԿ-ի եզրակացությունն ստանալու և <<Սեմանգ>> ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրերը տրամադրելու վերջնաժամկետը լրանալու հաջորդ օրը ժամը **09:00-ին**:

**Հանձնաժողովի**
**Նախագահ՝**

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետի տեղակալ, ինքը և սպառազինության ապահովման բաժնի պետ, ոստիկանության գնդապետ — Ա. Գասպարյան

**Անդամներ՝**

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գույքի ապահովման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ — Խ. Հարությունյան

ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր — Ս. Սեդրակյան

ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ — Մ.Հայրապետյան

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության իրավախորհրդատու — Գ. Մարտիրոսյան

**Քարտուղար՝** ՀՀ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ — Վ.Հովակիմյան